

կոսն, եւ օծաւ ձեռամբ չաճնցի տէր Յօհաննէս կաթողիկոսին, որ նախ Տէր Ագամ. ի հովանոցն կաթողիկոսարանին Կիլիկիոյ ի Վահկայն», զօրութեամբ արքունի հրովարտակին. ինք կը նստէր Սիս, իսկ Յովհաննէս՝ իր Աթոռէն մերժուած՝ կը նստէր չաճին, երկուքն ալ «Կաթողիկոս ամենայն չայոց եւ Պատրիարք տանն Կիլիկիոյ»: Ղուկաս հաղիւ երեք տարի ետքը նորոգութիւնները կատարեց, եւ մեռաւ 1737 Յուլիսին, հաղիւ թէ 22—23 տարեկան, թէպէտ ըստ Եփրեմի՝ «էր սա առոյգ հասակաւ, գեղեցիկ տեսլեամբ, առիւծորոտ ձայնիւ, կորովի մտօք», եւ իբրեւ յաջորդ կաթողիկոսութեան պատրաստած էր իւր եղբայրն Միքայէլ, «որ թէպէտ էր մանուկ տիօք» Ղուկասին յաջորդեց եւ օծուեցաւ անշուշտ նոյն Յովհաննէսէն՝ Կաթողիկոս. նոյն տարին Նոյեմբերի մէջ: Ասիկայ 1750ին Պոլիս կը գտնուէր եւ Էջմիածնի ձեռքէն քանի մը թեմեր գրաւելու համար արքունի հրամանագիր ձեռք բերելու աշխատեցաւ, սակայն ի զուր, եւ աքսորուեցաւ իր տեղն: Ժամանակակից գրող մը 1769 կը գրէ Միքայէլին համար: «Սա եկն ի Ստամպուլ եւ կամէր հանել քանի մի թեմ յԷջմիածնէ եւ կապել Սսայ, զոր Պատրիարքն Մինաս վ. ֆերմանով քշեաց զնա յիւր տեղն ի Ռաշիթ թուին (= 1750)», Այս ցեղն որ կը հաստատէր թէ Ս. Գրիգորի Աջնունի 1294էն ի վեր իր ցեղին մէջ պահուած՝ կաթողիկոսութիւնն ասով ձեռք բերաւ